# ԱԳՐՈ Լրատու

ԱՊՐԻԼ 5 - 15 2017 Թ. ԹԻՎ 8 (2129)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ


## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԳԻՊՈՒՄ

### *Յուրաքանչյուր գումարի ծախսին և որոշմանը պետք է հետևի թվային պատասխան. Կարեն Կարապետյանն այցելել է գյուղատնտեսության նախարարություն*

**Վարչապետ Կարեն Կարապետյանն այցելել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: Տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում ներկայացվել են գերատեսչության ընթացիկ ծրագրերը, միջազգային համագործակցության արդյունքներն ու ոլորտի զարգացման հեռանկարներն ու նախագծերը:**

Նախ անդրադարձ է կատարվել գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման 2017 թվականի ծրագրին: Զեկուցվել է, որ սերմերի ներկրման և մատակարարման գործընթացն արդեն իսկ ընթացքի մեջ է: Դրանց մի մասը ձեռք է բերվել նաև Գյումրիի սելեկցիոն կայանից, որի սերմերի վաճառքի գինը շատ ավելի ցածր է: Կառավարության ղեկավարը կարևորել է Գյումրիի սելեկցիոն կայանի զարգացումն ու գործունեության ընդլայնումը և հանձնարարել կարճ ժամանակահատվածում, ներկայացնել համապատասխան ծրագիր: «Ինչո՞ւ առ այսօր հաշվարկ չենք արել, թե ինչպես անել, որպեսզի դրսից կախվածությունը նվազեցնենք: Անընդհատ ասում ենք, որ պետք է ներմուծումը փոխարինել, ուրեմն պետք է ուսումնասիրենք, թե Հայաստանն ինչ է ներմուծում և դրա դիմաց ինչ ենք կարողանում անել:

3

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

### *ՀՀ գյուղատնտեսության նախարարն ընդունել է ԱՄՀ պատվիրակությանը*

**ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է Արժույթի Միջազգային Հիմնադրամի հայաստանյան առաքելության ղեկավար Հոսեյն Սամի ղեկավարած պատվիրակությանը: Պատվիրակության կազմում էր նաև Հայաստանում ԱՄՀ մշտական ներկայացուցիչ Տերեսա Դաբան Սանչեսը:**

Հանդիպման ընթացքում նախարարը ներկայացրել է Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն ուղղված կառավարության որդեգրած քաղաքականության հիմնական ուղղությունները, պետական օժանդակության ծրագրերը և նախատեսվող նախաձեռնությունները: «Մեր հիմնական նպատակն է՝ վերանայել ոլորտի պետական սուբսիդավորման ուղղությունները՝ գյուղատնտեսությունը զարգացնելու և այն դարձնելու քիչ ռիսկային, շահութաբեր և հետաքրքիր: Հայաստանի գյուղատնտեսությունը կարիք ունի էժան ֆինանսական ռեսուրսների, և մենք նախատեսում ենք տոկոսադրույքների սուբսիդավորմամբ օժանդակել մեր ֆերմերներին առանձին ծրագրերի միջոցով, որոնք ոլորտում զարգացում կապահովեն»,- նշել է նախարար Առաքելյանը:

Նախարարի խոսքով՝ այդ նպատակով քննարկման կներկայացվեն հակակարկտային ցանցերի և կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման սուբսիդավորման ծրագրերը: Արդեն իսկ մեկնարկել է տարեկան 2 % տոկոսադրույքով գյուղտեխնիկայի լիզինգի ձեռքբերման ծրագիրը: Նախարարությունը նախաձեռնել է նաև ՄՏԿ-ի ստեղծման փորձնական ծրագիր՝ նաև փոքր ֆերմերներին բարձրակարգ մեխանիզացիայով ծառայություն ապահովելու համար: Բացի այդ, շարունակվում են սուբսիդավորվող պայմաններով պարարտանյութերի, սերմացուների տրամադրման ծրագրերը:

Իգնատի Առաքելյանը տեղեկացրել է, որ նախարարությունը բանակցում է միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ GIS տիեզերական հեռազննման համակարգի ներդրման նպատակով, ինչը հնարավորություն կընձեռի ունենալ ոլորտի իրատեսական և հավաստի գնահատականները և դրանց հիման վրա կանխատեսումներ անել:

Կողմերը մտքեր են փոխանակել նաև գյուղատնտեսական կոոպերատիվների խթանման, ապահովագրական համակարգի ներդրման, բնակլիմայական աղետների պատճառով կորուստների նվազեցման և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցերի շուրջ:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

**Կառավարության նիստում Կարեն Կարապետյանը, անդրադառնալով հակակարկտային միջոցառումների իրականացմանը, նշել է, որ նախորդ ամիսների ընթացքում բազմիցս քննարկվել է հակակարկտային կայանների աշխատանքների որակի բարձրացման հարցը:** Վարչապետը հանձնարարել է ՀՀ արտակարգ իրավիճակների և գյուղատնտեսության նախարարներին 2-շաբաթյա ժամկետում՝ համատեղ քննարկելով նախկինում ներկայացված առաջարկությունները, կառավարության աշխատակազմ ներկայացնել առաջիկայում հակակարկտային միջոցառումների արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ՝ միաժամանակ քննարկման առարկա դարձնելով հնարավոր այլընտրանքային լուծումները, այդ թվում՝ նոր տեխնոլոգիաների ներմուծումը և ցանցային միջոցները: Ըստ անհրաժեշտության՝ հարցը քննարկել նաև տեխնիկական հնարավոր օժանդակություն տրամադրող այլ գերատեսչությունների հետ:

* * *

**Գործադիրը հաստատել է օրգանական գյուղատնտեսության ոլորտում հավատարմագրում իրականացնող միջազգային կազմակերպությունների ցանկը:** «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի համաձայն, օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստումն իրականացնում է սերտիֆիկացման մարմինը «օրգանական» կամ «անցումային շրջանի օրգանական» սերտիֆիկատ տալու միջոցով: Սերտիֆիկացման մարմնին հավատարմագրվում են ՀՀ կառավարության հաստատած ցանկում ներառված օրգանական գյուղատնտեսության ոլորտում հավատարմագրում իրականացնող միջազգային կազմակերպությունները: Մինչ օրս միջազգային այդ կազմակերպությունների ցանկը հաստատված չէր:

* * *

**Կառավարության նիստում գյուղատնտեսության ոլորտում ներկրվող ապրանքները տեղական արտադրանքով փոխարինելու վերաբերյալ վարչապետը նշել է. «Բազմիցս բարձրաձայնել ենք ներկրվող ապրանքները մրցունակ և որակյալ տեղական արտադրանքով փոխարինելու մեր որդեգրած քաղաքականության մասին:** Նշվածը վերաբերում է բոլոր ոլորտներին, այդ թվում՝ գյուղատնտեսությանը: Գյուղատնտեսության նախարարության կողմից ու նաև մեր աշխատանքային այցի արդյունքում առաջարկվել է երկու հստակ ուղղություն տեղական արտադրանքի խրախուսման վերաբերյալ՝ մեկը հանքային և կենսաբանական պարարտանյութերի արտադրությունն է, մյուսը՝ տեղական սերմնաբուծությունը՝ համապատասխան սելեկցիոն կայանների զարգացումով և այդ ոլորտի համակարգումով»: Գործադիրի ղեկավարը հանձնարարել է ՀՀ գյուղատնտեսության նախարարին՝ 1-ամսյա ժամկետում ուսումնասիրել ոլորտում առկա սելեկցիոն կայանների և սերմնաբուծությամբ զբաղվող կազմակերպությունների գործունեությունը և կառավարության աշխատակազմ ներկայացնել այդ ոլորտը զարգացնելու և համակարգելու վերաբերյալ կառավարության որոշման նախագիծ: Աշխատանքներին ներգրավվել նաև «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի մասնագետներին: ՀՀ գյուղատնտեսության և տնտեսական զարգացման և ներդրումների նախարարներին հանձնարարվել է համատեղ քննարկել և կառավարության աշխատակազմ ներկայացնել Հայաստանում հանքային և կենսաբանական պարարտանյութերի արտադրության ուղղությամբ հնարավոր ներդրումային ծրագրի ամբողջական փաթեթ և կառավարության որոշման նախագիծ: Կառավարության ղեկավարը նշել է. «Հաշվի առնելով ներկայիս շրջանում կենդանիների հնարավոր վարակների և հիվանդությունների ռիսկայնությունը, դրանից ելնելով գյուղացիական և ֆերմերային տնտեսություններում կենդանիների բուժկանխարգելիչ միջոցառումների և կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ պետական օժանդակության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը՝ հանձնարարում եմ ՀՀ գյուղատնտեսության և տարածքային կառավարման և զարգացման նախարարներին 2-շաբաթյա ժամկետում կառավարության աշխատակազմ ներկայացնել առաջարկություններ՝ սույն թվականի մայիսի 1-ից ՀՀ համայնքներում անասնաբույժի հաստիքներ սահմանելու և արյունառման, պատվաստումների աշխատանքներ իրականացնող շարժական խմբեր ստեղծելու վերաբերյալ»:


*Ցուցահանդես* Էջ 4

*Կոոպերացիա* Էջ 6

*Մասնագետի խորհուրդը* Էջ 7

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

### Քննարկվել է հայ-արգենտինական համագործակցության ընդլայնման հնարավորությունը

**ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գոնզալո Ուրրիոլաբեիտիայի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման նպատակն էր՝ քննարկել գյուղատնտեսության բնագավառում հայ-արգենտինական համագործակցության ընդլայնման առավել հեռանկարային ուղիները:**

Դեսպան Գոնզալո Ուրրիոլաբեիտիան վերահաստատել է արգենտինական կողմի պատրաստակամությունը խորացնել ագրարային ոլորտում երկկողմ փոխգործակցությունը: Այս համատեքստում կողմերն անդրադարձ են կատարել հունիս ամսին նախատեսվող արգենտինացի փորձագետների այցին, որոնք ժամանելու են հայկական կողմի առաջարկով օժանդակելու խորհրդատվական համակարգի բարեփոխումներին: Հաշվի առնելով արգետինական հարուստ փորձը խաղողագործության և գինեգործության ոլորտում՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը կարևորել է նաև սերտ համագործակցության զարգացումը Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի հետ՝ գին_եգործական արտադրության առավել արդյունավետ կազմակերպման և ոլորտի զարգացումն ապահովելու նպատակով:

Տեղեկացնելով, որ Հայաստանում ընթացքի մեջ է գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման լիզինգի ծրագիրը, որը բաց է բոլոր շահագրգիռ կազմակերպությունների համար՝ նախարար Իգնատի Առաքելյանը հույս է հայտնել, որ այն կարող է հետաքրքրություն ներկայացնել նաև Արգենտինայի գյուղտեխնիկայի մատակարարների համար:

Իգնատի Առաքելյանն արգենտինական կողմին ներկայացրել է հակակարկտային ցանցերի տեղադրման նպատակով նախատեսվող պետական օժանդակության ծրագրերը՝ պատրաստակամություն հայտնելով հետաքրքրության պարագայում արգենտիկական ընկերությունների հետ համատեղ, քննարկել Հայաստանում հակակարկտային ծրագրի իրականացման հարցը: Հանդիպման ընթացքում քննարկվել են համատեղ այլ ծրագրերի իրականացման հնարավորությունը, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

## ԾՐԱԳԻՐ

### Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն

**ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը օրերս մասնակցել է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող և Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) կողմից համաֆինանսավորվող և իրականացվող «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն» (ՕԳԱՆ) ծրագրի ղեկավար կոմիտեի հանդիպմանը:**

Եռամյա ծրագրի հիմնական նպատակն է՝ ֆինանսական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել Հայաստանում օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերներին, ագրոբիզնեսներին և կոոպերատիվներին, ինչպես նաև օժանդակել օրենսդրական բարեփոխումներին, տեղական շուկայի զարգացմանն ու արտահանման ծավալների ավելացմանը: «Մենք համոզված ենք, որ Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունն ունի զարգացման մեծ ներուժ: Տեսնելով այն աշխատանքը, որը դուք կատարում եք փոքր ու միջին օրգանական գյուղատնտեսության զարգացման համար, մենք ուզում ենք ձեզ հետ քննարկել մեկ այլ, ավելի հավակնոտ ծրագրի իրականացման հնարավորությունը Հայաստանում՝ օրգանական գյուղատնտեսությունը զարգացնելու համար: Եթե մենք կարողանանք գտնել օրգանական արտադրանքի իրացման համար շուկա և ապահովել ծավալ, ապա կարող ենք միասին ծրագիր մշակել՝ ներգրավելով տեղական մասնավոր և եվրոպական ավելի մեծ ներդրումներ, ինչպես նաև պետության աջակցություն կամ սուբսիդավորում իրականացնել»,- նշել է նախարար Իգնատի Առաքելյանը:

Նախարարը նաև ընդգծել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության պատրաստակամությունը ծրագրի մշակման նպատակով սեղմ ժամկետում ստեղծել աշխատանքային խումբ և կազմել համատեղ միջոցառումների ժամանակացույց:

Հանդիպման ընթացքում ՕԳԱՆ ծրագրի թիմի ղեկավար Դեյվիդ Մուկենհուբերն արձանագրել է ծրագրի առաջին փուլի հաջող իրականացումը, որի արդյունքում այժմ 46 ֆերմեր և արտադրող անցում են կատարում դեպի օրգանական գյուղատնտեսություն: Ծրագրի երկրորդ փուլի աշխատանքն ուղղված կլինի այդ օրգանական արտադրանքի հաջող իրացմանն ու շուկայավարմանը:

Ծրագրի շրջանակում, ֆերմերներին օժանդակելու նպատակով, նախատեսվում է օրգանական գյուղատնտեսության աջակցման կառույցների վերապատրաստում, կրթական հաստատություններին օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ ուսումնական ծրագրերի տրամադրում և աջակցություն՝ ժամանակակից ձեռնարկների մշակման հարցում:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

### Համատեղ աշխատանքային խմբեր

**ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը մասնակցել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի հետ հանդիպմանը՝ քննարկելու ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՀԱԱՀ հետ համատեղ մշակված աշխատանքային ծրագիրը:**

ՀՀ գյուղատնտեսության նախարարը նշել է, որ վարչապետի հանձնարարությամբ գյուղատնտեսության նախարարությունը մեկամսյա ժամկետում պետք է ներկայացնի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիր, որի հիմնական ուղղվածությունը պետք է լինի ներմուծումը ներքին արտադրությամբ փոխարինելը կամ արտահանման խթանումը:

Նախարարն առաջարկել է համալսարանի հետ ստեղծել միասնական աշխատանքային խումբ, որում կընդգրկվեն թե՛ գյուղոլորտի մասնագետներ և թե՛ տնտեսագետներ, որոնք տարբեր ուղղություններով հստակ և հիմնավորված ծրագրեր կմշակեն: «Եթե մենք կարողանանք համապատասխան հաշվարկներով և վերլուծություններով հիմնավորել, որ այդ ծրագրերը մրցակցային են, շահավետ և կարող ենք հաղթող դուրս գալ՝ ներմուծումը ներքին արտադրության փոխարինելու կամ արտահանումը խթանելու հարցում, ապա դրանք կդառնան ռազմավարական ծրագրերի մաս՝ պետական աջակցությամբ կամ սուբսիդավորմամբ, որոնք զարգացում կապահովեն», - կարևորել է նախարար Իգնատի Առաքելյանը:

Նախարարն անդրադարձել է նաև անասնաբուժության ոլորտին առնչվող խնդիրներին և դրանց լուծման հնարավոր ուղիներին, ինչպես նաև վերամշակման ճյուղի՝ որպես գյուղատնտեսության ոլորտի կարևոր ուղղության զարգացմանը:

ՀԱԱՀ ռեկտոր Արշալույս Թարվերդյանն իր հերթին վերահաստատել է բուհի պատրաստակամությունը՝ շարունակել ակտիվորեն համագործակցել ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ ոլորտի զարգացման նպատակով: «Գիտական խորհրդատվական առումով, պետք է համակողմանի աջակցություն լինի՝ համատեղ ուժերով Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգի առջև ծառացած խնդիրները որքան հնարավոր է արդյունավետ և կարճ ժամկետներում լուծելու համար»,- նշել է Արշալույս Թարվերդյանը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է պատրաստել փաստաթղթեր՝ մի շարք մշակաբույսերի սերմնաբուծության և սերմնարտադրության տնտեսական արդյունավետության, դրանց մշակության առավել նախընտրելի գոտիների և արդյունավետ ցանքաշրջանառության, ցածրարժեք մշակաբույսերը բարձրարժեք մշակաբույսերով փոխարինման, խորհրդատվական ծառայությունների, տոհմաբուծության, անասնաբուծության, կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերման արժեշղթայի արդյունավետ մեխանիզմների զարգացման և այլ կարևոր խնդիրների վերաբերյալ:

Այդ նպատակով նախատեսվում է ձևավորել 12 աշխատանքային խումբ և մեկամսյա ժամկետում մշակել ծրագրեր, որոնք համապատասխան փորձաքննությունից հետո, կներկայացվեն ՀՀ կառավարության քննարկմանը: Հանդիպման ընթացքում նախարար Իգնատի Առաքելյանը պատասխանել է նաև ներկաների հարցերին:

## ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

### Գարնանացանը՝ պետական հոգածության ներքո

**2017 թվականին ևս պետության կողմից կշարունակվի, մատչելի գներով, հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի, տարատեսակ սերմացուների տրամադրումը ֆերմերային տնտեսություններին:**

Կոնկրետ Լոռու մարզի գյուղատնտեսներին, համաձայն վաղօրոք ներկայացված հայտերի, կտրամադրվի շուրջ 2700 տոննա ազոտական, ֆոսֆորական ու կալիումիական պարարտանյութ, 1.000.000 լիտր դիզելային վառելանյութ, 265 տոննա հացահատիկի և կերաբույսերի սերմացու: Թեև անբարենպաստ եղանակները որոշ չափով խոչընդոտեցին գարնան գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկին, այնուհանդերձ Լոռու մարզի Թումանյանի, Ստեփանավանի և մասամբ Սպիտակի տարածաշրջանի գյուղերում սկսվել են գարնանացանի աշխատանքները:

Օրերս մարզի երկրագործները ստացան նաև ազոտական պարարտանյութի հերթական խմբաքանակը: Երկաթուղային կայարանի բեռնաթափման հրապարակում պարարտանյութի բաշխման գործընթացին հետևում էին Լոռու մարզպետի տեղակալ Հովհաննես Թադևոսյանն ու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության ու բնապահպանության վարչության պետ Գրիգոր Հակոբյանը: Պարարտանյութի բեռնաթափումն ու առաքումը համայնքներ ընթանում էր կազմակերպված և առանց խոչընդոտների:

Մարզպետի տեղակալը նշեց, որ գարնանացանի աշխատանքները կընթանան առանց խոչընդոտների, պարարտանյութի, դիզվառելիքի ու սերմացուի հայտ ներկայացրած բոլոր ֆերմերները կստանան իրենց հասանելիքը: Արդեն ցանք է կատարվել 2000 հեկտարի վրա: Հովհ. Թադևոսյանը նաև նշեց, որ կառավարությունը բավարարել է նաև ցրտաշունչ ձմռան հետևանքով ցրտահարված 1000 հեկտար աշնանացանի դաշտերում գարնան վերացանք կատարելու համար մատչելի գներով սերմացու տրամադրելու մարզի ղեկավարության խնդրանքը: Ընդհանուր առմամբ, մարզի ֆերմերներն արդեն ստացել են ավելի քան 1000 տոննա ազոտական պարարտանյութ: Գործընթացը շարունակական է, օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Լոռու երկրագործներին կտրամադրվի նաև աշանանացանի համար նախատեսված պարարտանյութի հայտավորված քանակությունը:

*lori.mtad.am*

ԱԳՐՈ Լրատու
Ապրիլ 5 - 15, 2017 թ.
Թիվ 8 (2129)

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

# Յուրաքանչյուր գումարի ծախսին և որոշմանը պետք է հետևի թվային պատասխան Կարեն Կարապետյանն այցելել է Գյուղատնտեսության նախարարություն

1

Ինչո՞ւ սերմերի ոլորտը չենք դիտարկում, եթե ունենք սելեկցիոն կայան: Եթե խոսում ենք արտահանումը ներքին արտադրանքով փոխարինելու մասին, ունենք մի բան, որը լավ է աշխատում, ուրեմն պետք է ընդլայնենք դրա գործունեությունը: Գյումրիի սելեկցիոն կայանի հիման վրա պետք է ստեղծել փակ բաժնետիրական ընկերություն, որը կկարողանա դառնալ նորմալ կոմերցիոն կառույց, որը զբաղվի և սերմերի արտադրությամբ և վաճառքով: Սերմերի ոլորտը պետք է դարձնել բիզնես, դրանով փող աշխատել և ամեն տարի սուբսիդավորման համար ավելի մեծ միջոցներ չհատկացնել»,- ասել է Կարեն Կարապետյանը:

Տեղեկացվել է, որ գարնանացանի աշխատանքները պատշաճ կազմակերպելու նպատակով, սկսվել է նաև գյուղացիական տնտեսություններին պարարտանյութի, դիզվառելիքի բաժանման գործընթացը՝ ֆինանսական բարձր կարգապահությամբ: Դիզվառելիքի տրամադրման հասցեականությունը բարձրացնելու ու նպատակային իրականացնելու արդյունքում կտնտեսվի 1,5 մլրդ դրամ:

Վարչապետը նշել է, որ յուրաքանչյուր միջոց ծախսելիս, որոշում կայացնելուց առաջ պետք է ունենալ կոշտ վերաբերմունք: «Պետք է հասկանալ՝ ի՞նչի համար ենք ծախսում, ի՞նչ է լինելու արդյունքում: Յուրաքանչյուր ծախսին, յուրաքանչյուր որոշմանը պետք է հետևի թվային պատասխան: Ինձ պետք է թվով ներկայացնեք, թե ինչ ենք ստանալու արդյունքում: Այլ լուծում չի ընդունվելու: Վերլուծել, մոնիթորինգ և նմատիպ բառերը պետք է օգտագործեք նվազագույնը, խոսում ենք լակոնիկ, գումարով, արդյունքով»,- ընդգծել է կառավարության ղեկավարը:

Վարչապետին տեղեկացվել է, որ աշխատանքներ են տարվում Հայաստանում օրգանական պարարտանյութի արտադրության ուղղությամբ. փորձարկումները ցույց են տվել, որ այն ավելի արդյունավետ է, գինը՝ շահավետ: Ներդրումային ծրագրի փաթեթը կներկայացվի կառավարություն:

Կարեն Կարապետյանին են ներկայացվել գյուղատնտեսական ապահովագրության համակարգի ներդրման, ինտենսիվ այգիների զարգացման, կարկտապաշտպան ցանցերի մատչելի պայմաններով ներկրման, լիզինգային պայմաններով գյուղտեխնիկայի տրամադրման ծրագրերի իրականացման, գյուղատնտեսական հողատարածքներում ոռոգման արդյունավետ՝ կաթիլային համակարգերի ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Նախատեսվում է նաև գյուղատնտեսական հումքի մթերման համար մատչելի վարկերի տրամադրման պիլոտային ծրագիր, ինչի արդյունքում՝ մթերող կազմակերպությունների և գյուղացիական տնտեսությունների միջև կկազմվի երաշխավորված պայմանագիր, իսկ գյուղացին մթերման գումարը կստանա մթերման պահին:

Անդրադարձ է կատարվել նաև հողերի բերրիության բարձրացման, գյուղատնտեսության գոտիավորման, ֆերմերների համար ուսումնական դասընթացներ կազմակերպելու ծրագրերին և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի գործունեությանը: Վարչապետ Կարապետյանը կարևորել է նշված բոլոր ծրագրերի արդյունավետ և հստակ իրականացումը: Անդրադառնալով նշված հիմնադրամի գործունեությանը՝ վարչապետն անհրաժեշտ է համարել վերջինիս կողմից իրականացվող բարձր շահութաբերություն և կարճ ժամանակահատվածում ծախսափակություն ապահովող ծրագրերում ներգրավել մասնավորին, իսկ էժան վարկային միջոցներն ուղղել ռազմավարական ծրագրերին: «Հիմնադրամը պետք է դարձնենք այն գործիքը, որով ֆերմերային տնտեսություններ ենք զարգացնելու, կաթիլային համակարգ, ինտենսիվ այգի ենք ներդնելու, լիզինգային ծրագիր ենք իրականացնելու, խորհրդատվական ծառայություն ենք մատուցելու, որպեսզի իրավիճակ փոխենք»,- ասել է վարչապետը՝ կարևորելով նշված բոլոր քայլերի ուղղությամբ հետևողական աշխատանքը: «Ի՞նչ եմ ակնկալում. պետք է առաջարկենք, ներդնենք մի բան, որը նորություն է, որը կարող է շահույթ բերել: Դուք պետք է ունենաք N հատ երջանկության բաղադրատոմս: Պետք է ներդնենք անհրաժեշտ գործիքակազմ, որը կբերի խնդիրների լուծման»,- ասել է Կարեն Կարապետյանը և պահանջել բոլոր ծրագրերն իրականացնել ժամանակին ու բարձր արդյունավետությամբ:

## ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

**Օրերս Կանաչ ուսուցման կենտրոնում անցկացվեց հերթական ուսուցում, որին մասնակցեցին 15 գյուղական կանանց խմբերի ներկայացուցիչներ՝ ՀՀ բոլոր մարզերից, ովքեր ընդգրկված են «Գյուղական Կանանց Խմբերի տնտեսական հզորացում կարողությունների զարգացման միջոցով» ծրագրում: Ուսուցման նպատակն էր՝ նպաստել կանանց կառավարչական և մարքեթինգային հմտությունների զարգացմանը, որը նրանց կօգնի հետագայում կայացնելու գրագետ և համապատասխան որոշումներ:**

Ներկայացումները, ինքնուրույն աշխատանքներն ու վարժությունները կազմում էին ուսուցման անբաժանելի մասը, որոնք օգնեցին մասնակիցներին առավել լավ հասկանալ մատուցվող նյութը և գնահատել իրենց ուժեղ և թույլ կողմերը: ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Արմեն Հարությունյանի կողմից բոլոր հարցումներին տրվեցին սպառիչ պատասխաններ: Մասնակիցներին տրվեցին նաև վկայականներ:

Մասնակիցներին հատկապես ոգևորեց այն փաստը, որը դասընթացավարը վերապատրաստվել է Բրիստոլի, Հարվարդի, Կալիֆորնիայի Դեյվիս համալսարաններում և ունի ագրոբիզնեսի կառավարման փորձ, ինչպես նաև դասավանդում է Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում և Հայաստանի Ամերիկյան համալսարանում: Ագրոբիզնեսի ոլորտում ներգրավված և դեռևս առաջին քայլերն անող կանանց խմբերին ներկայացվեց կառավարչական որոշումների կայացման՝ ինքնարժեքի հաշվարկի, ֆինանսավորման ձևերի, ռիսկերի, հետգնման ժամանակահատվածի և շահութաբերության մակարդակի, շուկայահանման և հետբերքահավաքի կարևորությունը հատկապես փոքր գյուղացիական տնտեսությունների դեպքում: Մանրամասն ներկայացվեցին նաև հետևյալ թեմաները՝ կառավարման հիմնական միջոցները, գործառույթները, տնտեսությունների նպատակների և առաքելության մշակումը, ինչպես նաև մարքեթինգ և վաճառք թեմաները՝ թիրախային շուկայի ընտրություն, ուսումնասիրություն, ապրանք, գնագոյացում, խթանում, դիստրիբուցիա:

«Գյուղական Կանանց Խմբերի տնտեսական հզորացում կարողությունների զարգացման միջոցով» ծրագիրը իրականացվում է «Կանաչ արահետ» գյուղատնտեսության աջակցության ՀԿ-ի կողմից՝ ՄԱԿ-ի Կանանց հարցերով զբաղվող գրասենյակի Գենդերային հավասարության հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

*«Կանաչ արահետ»*

### ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

**ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում օրերս հրավիրվել էր խորհրդակցություն Արարատի մարզից ստացված գյուղատնտեսության ոլորտին առնչվող ներդրումային մի շարք ծրագրերի քննարկման նպատակով:**

Խորհրդակցությունը վարում էր նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը, մասնակցում էին ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ-ի, «Գյուղական ֆինանսական կառույց-ԾԻԳ» պետական հիմնարկի, Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի ներկայացուցիչներ, ծրագրերի շահառուներ և այլ պատասխանատուներ: Ներկայացված ծրագրերը, մասնավորապես, վերաբերում էին օրգանական մթերքների արտադրության և վերամշակման կազմակերպմանը, նորագույն տեխնոլոգիաներով աշխատող չորանոցի ստեղծմանը, կաթի վերամշակման գործարանի գործարկմանը և այլն:

Պատասխանատուները, շահառուների հետ համատեղ, մանրամասն քննարկել են ներկայացված ծրագրերի նպատակահարմարությունն ու հիմնավորումները, առանձին դեպքերում՝ դրանք վերանայելու հնարավորությունները, ինչպես նաև՝ ֆինանսավորման առավել նախընտրելի տարբերակները:

### ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

**Ս/թ հունվարի 1-ի դրությամբ, վերամշակող 20 ընկերություններ 2015-2016 թվականներին գնված պտուղբանջարեղենի և խաղողի դիմաց գյուղացիական տնտեսությունների նկատմամբ ունեցել են 1 մլրդ 611.2 մլն դրամի չկատարված պարտավորություն:**

Վճարումների կատարման ընթացքի վերահսկողության նպատակով, ՀՀ գյուղատնտեսության նախարարության առաջարկությամբ ընկերությունները կազմել են չկատարված պարտավորությունների մարման ժամանակացույց: 2017 թվականի ապրիլի 7-ի դրությամբ, 6 ընկերություններ ամբողջությամբ կատարել են պարտավորությունները, իսկ մնացած 14 ընկերությունների չկատարված պարտավորությունները կազմում են 452.5 մլն դրամ:

### ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ՝ ԻՏԱԼԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՄԲ

**Ագրարային համալսարանի Ագրոնոմիական ֆակուլտետի դասախոսների և ուսանողների ուշադրության կենտրոնում համաշխարհային պտղաբուծության ժամանակակից տեխնոլոգիաներն են:**

ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող և ՊԳԿ-ի կողմից իրականացվող «Տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ԵՀԳԳՀԾ/ENPARD» ծրագրի շրջանակներում, ապագա մասնագետները կայացած աշխատաժողովի շրջանակներում, ձեռք կբերեն նոր գիտելիքներ ու հմտություններ: «Համաշխարհային պտղաբուծության ժամանակակից տեխնոլոգիաները» թեմայով աշխատաժողովի շրջանակներում ագրոնոմիական ոլորտի ապագա մասնագետները արդեն չորրորդ անգամ հանդիպեցին Հայաստանում գտնվող Իտալիայի Անկոնայի համալսարանի պրոֆեսոր, ՊԳԿ ԵՀԳԳՀԾ/ENPARD ծրագրի միջազգային փորձագետ Դավիդե Նիրեի և միջազգային փորձագետ Միկելե Բրավետտիի հետ: Դավիդե Նիրեն, բարձր գնահատելով մեր երկրում պտղաբուծության ոլորտի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ նշեց, որ մեծագույն հաճույքով է աշխատում երիտասարդ սերնդի հետ: Ծանոթացնելով պտղատու ծառատեսակների էտի և ձևավորման առաջավոր տեխնոլոգիաներին՝ պրոֆեսորը կենտրոնացավ մի քանի տեսակների էտի աշխատանքների իրականացման վրա:Իտալացի մասնագետների հետ հանդիպմանը ներկա էին Ագրոնոմիական ֆակուլտետի դեկան Գագիկ Սանթրոսյանը և ՊԳԿ ԵՀԳԳՀԾ/ENPARD ծրագրի ղեկավար Վահան Ամիրխանյանը:

*www.anauam*

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՐԿԱՎՈՐ Է ՍՏԵՂԾԵԼ ՉՐԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԲԱԶԱ

***Հայաստանի «Չորացված միրգ արտադրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունն արտադրում է որակյալ համային հատկանիշներով, ինչպես նաև գրավիչ ապրանքային տեսքով աչքի ընկնող չորացված միրգ և բանջարեղեն: Ասոցիացիայի նախագահ Սանդրո Աբովյանի տեղեկացմամբ, բարձրորակ արտադրանքը, այնուամենայնիվ, իրացման խնդիր ունի:***

Ասոցիացիայի անդամները այն ամենը, ինչն աճում է Հայաստանում՝ ծիրան, դեղձ, սալոր, տանձ, խնձոր և այլ մրգատեսակներ, նաև բանջարեղեն, չորացնում են: «Չրագործներն արտադրում են այնքան, որքան կարող են իրացնել՝ հիմնականում ներքին շուկայում: Մինչդեռ նրանք ունեն լայն հնարավորություն՝ ավելին արտադրելու: Արտահանման նպատակով էականորեն պետք է բարելավվի արտադրանքի ապրանքային տեսքը, որպեսզի կարողանանք մուտք գործել արտաքին շուկա և, հնարավորինս նպաստավոր գներով, վաճառել մեր արտադրանքը»,- ասում է ասոցիացիայի նախագահ Ս. Աբովյանը, ապա հավելում, որ արտաքին շուկա դուրս գալու պահանջներից մեկն էլ՝ չրերի անհրաժեշտ քանակության ապահովումն է: «Որպեսզի կարողանանք ապահովել առկա պահանջարկը, պետք է ստեղծենք չրերի հավաքման կետ, այսպես կոչված՝ կենտրոնացված բազա, որտեղից չրերը տեսակավորվելով, փաթեթավորելով՝ միևնույն ապրանքանիշով կարող ենք արտահանել»,- պատմում է ասոցիացիայի նախագահը: Նրա կարծիքով՝ այդ դեպքում աշխատանքներն ավելի կազմակերպված բնույթ կկրեն և կընթանան համակարգված ձևով: Մինչդեռ արտադրության փոքր ծավալ ունեցող անհատների համար դժվար է արտահանման կազմակերպումը, քանի որ վերջիններս չեն կարող ապահովել անհրաժեշտ քանակություն: Ասոցիացիայի անդամները որոշել են արտադրանքի ապրանքանիշն անվանել «Հայկական չիր»:

Ինչ վերաբերում է հավաքման կետի ստեղծմանը, ապա Սանդրո Աբովյանի հաշվարկներով, այն ֆինանսական լուրջ ներդրումներ է պահանջում, ինչն ասոցիացիայի միջոցներով հնարավոր չէ իրագործել: Ծրագրի իրականացման համար պետք է ունենալ շինություններ, չրի վերամշակման և փաթեթավորման սարքավորումներ, արտադրանքի պահպանության համար՝ սառնարաններ և այլն: Բացի այդ, ըստ ասոցիացիայի նախագահի, այդ կառույցի մասնագետները պետք է մշտապես խորհրդատվություն ապահովեն միրգ և բանջարեղեն արտադրող ֆերմերներին և չրագործներին՝ մրգերի և բանջարեղենի հավաքման ժամկետների, չորացման տեխնոլոգիայի և մասնագիտական այլ մանրակրկիտ հարցերի վերաբերյալ: Նպատակը մեկն է՝ թողարկել միջազգային չափորոշիչներին համապատասխան արտադրանք և արտահանել: Իսկ մեր երկրի բնակլիմայական պայմանները թույլ են տալիս որակյալ չրի պատրաստման համար ստանալ համապատասխան հումք:

***Նելլի Սահակյան***

ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ՍՆՆԴԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ

***Ագրոլրատու թերթի հյուրն է «Դայնամիկ Դեվելոփմենթ Գրուպ Ինտերնեյշնլ» ընկերության շուկայավարման փորձագետ Էմմա Միքայելյանը, և մենք քննարկում ենք սննդամթերքի նկատմամբ եվրոպական հասարակության պահանջարկի հիմնական բնութագրերը: Էմման ներկայացնում է վերջերս NutritionSensus-ի կողմից հրապարակված Եվրոպայում իրականացված հետազոտության հրապարակված արդյունքները: Հետազոտությունը կատարվել է Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Մեծ Բրիտանիայում և Շվեդիայում ապրող մեծահասակ 18-75 տարեկան 2500 ռեսպոնդենտների հետ, ովքեր կատարում են իրենց ընտանիքների գնումները:***

Ըստ ուսումնասիրության՝ հարցվածների 75 տոկոսը պատրաստ է գնել առողջ սնունդ, իսկ 60 տոկոսը պատրաստակամություն է հայտնել օգտագործել առողջ սնունդ՝ խուսափելով առողջական խնդիրներից:

Ըստ հարցվածների, առողջ սնունդ են համարվում թարմ մրգերը և բանջարեղենը, յոգուրտը, հացահատիկային մշակաբույսերը և այնպիսի ուտելիքներ, որոնք պարունակում են վիտամիններ և գիտականորեն ապացուցված այլ օգտակար բաղադրիչներ: Եվրոպացիները լավ տեղեկացված են շաքարի և ճարպերի չարաշահման վտանգների մասին, նրանք նաև ծանոթ են այնպիսի ցուցանիշների, ինչպիսիք են օրինակ, Glycemic Index-ը, որը ցույց է տալիս ուտելիքի ազդեցությունը արյան մեջ գլյուկոզայի մակարդակի վրա: «Սա ցույց է տալիս, որ սննդի արտադրությամբ զբաղվող ընկերությունները կրթում են սպառողներին՝ մեծացնելով առողջ սննդի նկատմամբ պահանջարկը: Ուսումնասիրությունը կենտրոնացվել է յոգուրտի սպառման վրա: Հարցվածների 28 տոկոսն այն դիտարկում է որպես ամենօրյա սնունդ, իսկ 31 տոկոսը նշել է, որ յոգուրտն օգտագործում է շաբաթական մի քանի անգամ»,- նշում է Միքայելյանը:

Յոգուրտի օգտագործման հիմնական պատճառներն են համարվում համը, ցածր յուղայնությունը և շաքարի ցածր պարունակությունը: Մեկ այլ օրինակ. գնալով ավելանում է ցիկորիի արմատի մանրաթելի օգտագործումը կաթնամթերքի, հացի, հրուշակեղենի և ըմպելիքների արտադրության մեջ: Ըստ կանխատեսումների՝ այն շուտով ավելի լայն տարածում է գտնելու հատկապես առանց շաքար կամ ցածր շաքարայնությամբ սննդամթերքի մեջ: Իր բնական քաղցրությամբ այն նվազեցնում է շաքարի պարունակությունը և բարելավում է արյան մեջ շաքարի մակարդակը: Այն նաև նպաստում է աղիների բարենպաստ աշխատանքին և օգնում է քաշի կարգավորմանը: «Հարցվածների 25 տոկոսը նշել է, որ պատրաստ է գնել մթերքներ, որոնք պարունակում են ցիկորիի մանրաթել: Շուկայական այս տենդենցը հուշում է արտադրողներին, որ պետք է ստեղծել մթերքներ, որոնք կօգնեն եվրոպացիներին բարելավել ու իրենց սննդակարգը»,- հավելում է Էմման: Այստեղից ենթադրվում է, որ Հայաստանյան ձեռնարկությունները, եթե ցանկություն ունեն եվրոպական շուկաներում նշանակալի ներկայություն ունենալ, պետք է հարմարեցնեն իրենց արտադրանքն այդ բնութագրերին: «Հենց այդպիսի ծառայություններ էլ մենք մատուցում ենք մեր գործընկերներին՝ օգնելով նրանց նորարական, շուկայի պահանջարկին համապատասխան արտադրանքի մշակման հարցում»,- իր խոսքը եզրափակում է փորձագետը:

***Ն. Սահակյան***

# ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԵԼԻՔՍԵԹԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*Կյանքի 66-րդ տարում մահկանացուն կնքեց գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող, խորհրդատվության համակարգի ճանաչված մասնագետ, ակադեմիկոս Արշալույս Հայրապետյանը:*

Արշալույս Մելիքսեթի Հայրապետյանը ծնվել է 1950 թվականին, դպրոցն ավարտելուց հետո, 1968-1969 ուս. տարում ընդունվել և 1974 թվականին ավարտել է Երևանի Անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի Անասնաբուծական ֆակուլտետը: Ավարտելուց հետո աշխատել է նույն ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող, իսկ 1974-1976 թվականներին՝ Հայկական Անասնաբուծական-անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես գլխավոր մասնագետ ստուգող-ասիստենտ՝ սպասարկելով Երևանի Շահումյանի շրջանի տավարաբուծական չորս տնտեսությունների տոհմային հաշվառման աշխատանքները: 1976-1978 թթ. աշխատել է Հայկական Անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող, իսկ 1978-1981 թթ. սովորել է Անասնաբուծության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի /ք. Մոսկվա/ ցերեկային ուսուցման ասպիրանտուրայում: 1981 թ. գյուղատնտեսական գիտությունների թեկնածու է: 1981-1994 թթ. աշխատել է Անասնաբուծության և կերարտադրության գիտահետազոտական ինստիտուտում՝ սկզբում կրտսեր, հետո ավագ գիտաշխատող, այնուհետև՝ լաբորատորիայի և բաժնի վարիչ,1987 թ.՝ ավագ գիտաշխատող է: 1994-1998 թթ. աշխատել է վերոհիշյալ ինստիտուտում՝ որպես գիտության գծով փոխտնօրեն:

1998 թ. մրցութային կարգով նշանակվել է «Ագրոգիտություն» ՊՓԲԸ գիտության գծով փոխտնօրեն: 2002 թ. կազմակերպության կառուցվածքային փոփոխություններից հետո, նշանակվել է ԳԱՀԿ-ում գիտության և ներդրման բաժնի պետ, այնուհետև՝ Ինովացիոն տեխնոլոգիաների և խորհրդատվության բաժնի պետ: Հեղինակ է շուրջ 45 գիտական հոդվածների, հանձնարարականների, մեթոդական ցուցումների և ձեռնարկների:

Այս ամենին զուգընթաց, դասախոսություններ է կարդացել ՀԱԱՀ-ում՝ իր փորձն ու գիտելիքները փոխանցելով ապագա մասնագետներին: Բազմիցս նշանակվել է ՀԱԱՀ պետական քննական հանձնաժողովների նախագահ: Վերապատրաստվել է ԱՄՆ-ում, Չեխիայում, Հունգարիայում գործող նմանատիպ կառույցներում: Արժանացել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի պատվոգրերի և շնորհակալագրերի, ստացել բազմաթիվ արտոնագրեր: 2010 թ. ընտրվել է ՀՀ Անասնաբուժական (կենդանաբուժական) բժշկագիտության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

2015 թ. մարտից «Ագրոգիտություն» գիտական ամսագրի գլխավոր խմբագիրն էր, ԳԱՀԿ-ՓԲ ընկերության փոխտնօրենը, ուսուցողական և խորհրդատվական աշխատանքների համակարգողը: Անմիջական մասնակցություն է ունեցել «Տեխնոլոգիաների գնահատման» ծրագրի կանոնակարգի մշակմանը, ծրագրերի իրականացման մոնիթորինգի աշխատանքներին:

Գիտության նվիրյալի, հմուտ կազմակերպչի, մանկավարժի և խորհրդատուի հիշատակը միշտ վառ կմնա գործընկերների, ուսանողների և նրան ճանաչողների հիշողության մեջ: Խորին ցավակցություն և զորակցություն նրա մտերիմներին և մերձավորներին:

ԱԳՐՈ Լրատու
Ապրիլ 5 - 15, 2017 թ.
Թիվ 8 (2129)

ՅՈՒՅՆԱՇԱՆԴԵՍ-ՏՈՆԱՎԱՃԱՌ

# ՀԱՍՈՒՅԹԸ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ ՀԵԿԱ-Ի ՀԵՏԱԳԱ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ

***Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան (ՀԵԿԱ), օրերս Էլիտ Պլազա Բիզնես Կենտրոնում, կազմակերպել էր ավանդական դարձած գարնանային բարեգործական տոնավաճառ՝ նվիրված Ծաղկազարդին և Սուրբ Զատիկին: Տոնավաճառին մասնակցելու համար հրավիրվել էին ՀՀ տարբեր մարզերը ներկայացնող կին արտադրողներ, ինչպես նաև միջազգային և տեղական կազմակերպություններ, դեսպանատներ, Հայաստանում ապաստան գտած հայրենակիցներ: Միջոցառումն ուղեկցվում էր մշակութային ծրագրով:***

«Կուզենայի, որ մեր երկրում ստեղծվեին բարեգործության ապահովման այնպիսի պայմաններ, որ մեզ համար տարվա բոլոր օրերը տոն համարվեին: Այս և նման միջոցառումները ՀԵԿԱ-ի համար դարձել են ավանդույթ: Նպատակը՝ տեղական արտադողների, ինչպես նաև ժողովրդական արվեստի գործիչների համար իրենց արտադրանքը ներկայացնելու հնարավորության ընձեռումն է»,- բացման խոսքում ասաց ՀԵԿԱ նախագահ Լիլիթ Ասատրյանը: Ցուցահանդեսում ներկայացված էր նաև ՀԵԿԱ-ի սոցիալական ձեռնարկության «Լավ թեյ» ապրանքանիշը կրող արտադրանքը: Ցուցադրված էին լորենու, պատրինջի, խնկածաղկի, դաղձի և ուրցի թեյեր, ինչպես նաև խառը թեյափնջեր, որոնցում համադրված էին բուսական տարբեր թեյատեսակներ: Արդյունքում՝ ստացվել էին հրաշալի թեյափնջեր: Արտադրությունը կազմակերպվել է ՀՀ Լոռու մարզում: Թեյաբույսերի հավաքչության ու չորացման աշխատանքներում ներգրավված են 200-ից ավելի կանայք: «Աշխատանքների ճիշտ կատարման համար ՀԵԿԱ-ն կազմակերպել է նաև ուսուցողական սեմինարներ, որոնց ընթացքում աշխատակիցները ծանոթացել են տարբեր բուսատեսակների հավաքման ժամկետներին և մասնագիտական հմտության հետ կապված, այլ հարցերի, ինչպես նաև չորացման տեխնոլոգիական առանձնահատկություններին»,- նշեց ՀԵԿԱ-ի ծրագրերի համակարգող Մարիամ Պողոսյանը:

Բուսական թեյերի յուրօրինակ և հարուստ հավաքածու էր ներկայացրել նաև «Ռիթեյա» ընկերությունը, որը գործում է ՀՀ Կոտայքի մարզում: «2016թ.-ից մինչև օրս մասնակցել ենք 5-ից ավելի ցուցահանդեսների, ինչպես նաև գյուղական համայնքներում կազմակերպել ենք դասընթացներ՝ աշխատանքներում ընդգրկված կանանց համար: Թեյահումքի ձեռքբերման նպատակով, պայմանագրեր ենք կնքել մի շարք համայնքների բնակիչների հետ: Անցյալ տարվա մեր հաջողությունը կայանում էր նրանում, որ արտահանման նոր շուկաներ ձեռք բերեցինք ԵՏՄ տարածաշրջանում»,- տեղեկացրեց ընկերության մարքեթինգի գծով պատասխանատու Նաիրի Մարգարյանը: Նախատեսել են կազմակերպել նաև օրգանական թեյաբույսերի վերամշակում՝ ընդլայնելով վայրի բուսատեսակների հավաքչության ծավալը, ինչի արդյունքում արտահանման նոր շուկաներ կունենան եվրոպական երկրներում: Կոտայքի մարզի Գեղարդ գյուղում է գործում եվրոպական չափանիշներին համապատասխան արտադրամասը, որը հագեցած է չորացման համար լավագույն սարքավորումներով: Իսկ առաջիկայում կներմուծեն թեյի փաթեթավորման և արտադրական այլ սարքավորումներ, որոնք հնարավորություն կտան կազմակերպել նաև չրերի և հատապտղային թեյի արտադրություն:

Բուսական թեյերի բազմազանությամբ աչքի էր ընկնում նաև «Անթառամ» ընկերության տաղավարը՝ իր «Առողջ հայր», «Առողջ մայր», «Հաճելի առավոտ», «Անտիսթրես» և այլ հետաքրքիր ու թեյի հատկանիշները բնորոշող անվանումներով թեյատեսակները (ցուցադրված էին 13 անուն բուսական թեյեր): «Անթառամը» հիմնադրվել է 1989 թ.-ին, իսկ 1996 թ.-ից սկսել են զբաղվել նաև բուժիչ թեյաբույսերի արտադրությամբ: Ընկերության ներկայացուցիչ Աստղիկ Բախտիկյանի տեղեկացմամբ, այս ցուցահանդեսին ներկայացրած իրենց նորույթը «Մեղրախոտով թեյն» էր, որը նախատեսված է շաքարախտով հիվանդ մարդկանց համար: «Թեյն իր մեջ պարունակում է բնական շաքար, քաղցրահամ է, հաճելի և օգտակար, միաժամանակ կարգավորում է օրգանիզմի նյութափոխանակությունը», - հավելում է Աստղիկ Բախտիկյանը:

Անհատ ձեռներեց Գայանե Ավագյանը շուրջ 20 տարի է, ինչ զբաղվում է բուսաբուժությամբ: Մասնագիտությամբ քիմիկոս Գայանեն լավ է հասկանում բույսերի լեզուն, մանրակրկիտ ուսումնասիրել է դրանց նշանակությունն ու

բուժական հատկանիշները: «Երեքնուկի ծաղիկներն օգտագործելու դեպքում բարձրանում է օրգանիզմի դիմադրողականությունը, այն մաքրում է արյունը, կարգավորում է վերջինիս հետ կապված բոլոր խնդիրները»,- հատ-հատ ներկայացնելով ցուցադրված բուսատեսակները՝ պատմում է Գայանեն: Ցուցադրված էին նաև բուսական թեյեր: Այցելուների առանձնակի հետաքրքրությանն արժանացան տարբեր բույսերի և դրանց սերմերի համադրմամբ պատրաստված համեմունքները, որոնք օգտագործվում են մսի, մսամթերքի, ձկան, ձվի և այլ սննդամթերքների հետ՝ որպես հավելումներ: Տիկին Գայանեն կարևորեց նաև դրանց բնապահպանորեն մաքուր և օգտակար լինելու հանգամանքը:

Ինչպես միշտ, տեսականու բազմազանությամբ և ապրանքային տեսքի գրավչությամբ աչքի էին ընկնում «Հալեպ» խանութների ցանցի ներկայացրած տեսականին: Տաղավարում ցուցադրված էին նաև ընկերության արտադրության Միջին Արևելքի քաղցրավենիքները: Փախլավայի բազմաթիվ տեսակներ, լոխումներ, չարազներ, ինչպես նաև համեմունքներ, բուսական թեյեր և այլն: Ընկերությունը հայկական շուկայում է՝ սկսած 1999 թ.-ից: «Տեղական սպառողը վաղուց ծանոթ է մեր արտադրանքին և արդեն ձևավորվել է որոշակի պահանջարկ: Ուստի մեր գերխնդիրն է՝ շուկայում անընդհատ հանդես գալ այնպիսի նորույթներով, որոնք դարձյալ կգրավեն սպառողի ուշադրությունը»,- եզրահանգում է ընկերության հիմնադիր տնօրեն Ալին Սարյանը: Ելնելով շուկայի պահանջարկից՝ ընկերությունը վերջերս փոխել է արտադրանքի փաթեթավորման ձևը, բարելավվել ապրանքային տեսքը: «Հալեպ»-ը շարունակում է ընդլայնել խանութների ցանցը՝ արտադրության մեջ մտցնելով նաև առողջարար և օրգանական սննդատեսակներ, ինչպես նաև բուժիչ թեյեր:

Գերմանական զարգացման գործակալության աջակցությամբ ցուցահանդեսին մասնակցում էին նաև մեծ թվով սիրիահայեր: Անի և Լենա Շամլյան քույրերը տեղահանվել և արդեն 5-րդ տարին է՝ ինչ բնակվում են Երևանում: Ցուցահանդեսին ներկայացրել էին Սուրբ Զատիկին նվիրված սիրիական թխվածքներ, ինչպես նաև ավանդական տեխնոլոգիայով պատրաստված՝ ընկույզի և այլ մուրաբաներ: Արտադրության մեջ օգտագործում են սիրիական և ֆրանսիական համեմունքներ, որոնք առանձնակի համ ու բույր են պարգևում գեղեցիկ դիզայնով ներկայացված թխվածքաբլիթներին և քաղցրավենիքներին: Քույրերը մասնակցելով դասընթացներին՝ ծանոթացել են նաև հայկական անուշեղենի, մասնավորապես՝ քաղցր սուջուխի պատրաստման տեխնոլոգիային:

Ծաղկազարդին և Սուրբ Զատիկին էր նվիրված նաև Ագապի և Նազանի Օհանյան քույրերի («Լույսեվա» ՍՊԸ-ի, ք. Աբովյան) տաղավարը, որտեղ ներկայացված էին հայկական ավանդական քաղցրավենիքներ, թխվածքաբլիթներ և թեմատիկ ձևավորված տարբեր չափերի անձեռոցիկներ: Ընկերությունը համագործակցում է մանկական սրճարանների հետ:

«Գյուղի տատիկ» ՍՊԸ-ի չրերով, Աշտարակի տարածաշրջանի ավանդական անուշեղենով, քաղցրավենիքներով ու չարազեղենով հարուստ տաղավարը ներկայացնում էր «Գյուղի կին» ՀԿ-ի նախագահ Վերա Զաքարյանը: Ընկերությունը թողարկում է 35 անուն արտադրատեսակների, միաժամանակ վերամշակելով միրգը՝ արտադրում են նաև պահածոներ: Արտադրատեսակներից առանձնանում է լոլիկի չիրը, որից պատրաստվում են տարբեր աղցաններ: Չրերի յուրօրինակ տեսականիով և ավանդական քաղցրավենիքներով հանդես էր եկել նաև «Բյուրակն» առևտրային կոոպերատիվը: Կոոպերատիվի նախագահ Ծովիկ Օհանյանի տեղեկացմամբ, նախատեսում են արտադրել օրգանական մթերքներ, այդ թվում՝ ջերմատնային ելակ:

Դեռևս 2 տարի առաջ Հայաստանում բացվեց Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանատունը և բացման օրվանից Ն.Գ. Ջասիմ Մուհամեդ Ալ Կասիմին մշտապես քաջալերել է նման ցուցահանդեսներին մասնակցությունը: Այս անգամ ևս դեսպանատունը ներկայացրել էր էմիրաթական և արաբական քաղցրավենիքներ, ուտեստներ, ինչպես նաև Էմիրաթների հանրահայտ խուրման: Աշխարհում հայտնի են արաբական քաղցրավենիքները՝ իրենց յուրահատուկ համով և համեմունքներով, որոնք պատրաստվում են ընկույզով, նուշով, խուրմայով և այլն: Իսկ Էմիրաթների խուրման իր համով տարբերվում է նույնիսկ Բաղդադի խուրմայից: Քանի որ Դուբայը դարձել է մոլորակի ամենաշատ այցելվող քաղաքներից մեկը, այստեղ է գտնվում աշխարհի ամենաբարձր շենքը, ամենաբարձր մզկիթը, ամենամեծ հյուրանոցը, քաղաքը հայտնի է մի շարք ամենաներով, ուստի այս ցուցահանդեսում ևս հանդես էին եկել ամենագեղեցիկ և ամենագրավիչ տաղավարով:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## Ի ՆՇԱՆ ԵՐԱԽՏԻՔԻ

ՀՀ անկախության 25 և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի հիմնադրման 10-ամյա հոբելյանների առթիվ, օրերս մասնաճյուղի տնօրեն, գ.գ.դ. Ալեքսանդր Հակոբյանի նախաձեռնությամբ, ՀԱԱՀ -ի 1-ին և 2-րդ մասնաշենքերին հարող տարածքում, մասնաճյուղի հանրույթի և տնօրենի անունից տնկվեց 3 արծաթափայլ եղևնի: «Եղևնիները խորհրդանշում են մայր բուհի նկատմամբ մեր ունեցած գնահատանքը և երախտիքը»,- նշել է մասնաճյուղի տնօրեն Ալեքսանդր Հակոբյանը:

*Էջի նյութերը՝ Նելլի Սահակյանի*

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

# ԱՊԱԳԱՆ ԱՌՈՂՋ ՍՆՆԴԻՆՆ Է

***Շուրջ 20 տարի է, ինչ Լոռու մարզի համայնքից Ալվարդ Դավոյանը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Սկզբնական շրջանում ծաղիկների ջերմոցային մշակմամբ զբաղվող Ալվարդի մոտ տարիների ընթացքում նոր մշակաբույսեր աճեցնելու ցանկություն է առաջացել: Աստիճանաբար ավանդական մշակաբույսերի՝ լոլիկի, վարունգի, պղպեղի և սմբուկի կողքին Ալվարդն սկսել է փորձարկել նաև նոր՝ Հայաստանի համար ոչ ավանդական համարվող մշակաբույսեր:***

Դրանց մշակման նրբություններին ու հմտություններին ծանոթանալու հարցում օգնել է «Կանաչ արահետ» հասարակական կազմակերպությունը, որի կողմից 2010-2011 թթ.-ին իրականացվող ծրագրերում, որպես սոցիալական աշխատող ընդգրկված Ալվարդը ոչ միայն զբաղվում է իր բուն աշխատանքով, այլև շահառու կանանց հետ մասնակցում կազմակերպվող դասընթացներին ու քննարկումներին: «Ծրագրի նպատակը՝ կանանց ներգրավելու միջոցով խոցելի ընտանիքներին գյուղատնտեսական աշխատանքների մեջ ներառելն էր: Թե՛ ես, թե՛ ծրագրի շահառու կանայք թեև ծանոթ էինք ավանդական մշակաբույսերի աճեցման նրբություններին, սակայն հատկապես ոչ ավադական մշակաբույսերը մեզ համար նորություն էին»,- հիշում է Ալվարդը: Նրա խոսքով՝ ծրագրի ավարտին Վարդաբլուրում գյուղատնտեսությամբ զբաղվող կանանց թիվը զգալիորեն ավելացել է, շատերի տնամերձերում հայտնվել են նոր մշակաբույսեր, որոնցից ամենատարածվածը բրոկոլին էր:

«Միջազգային ու տեղական կազմակերպությունների կողմից գյուղական համայնքներում իրականացվող դասընթացներն ու ծրագրերը կարևորելով՝ Ալվարդը նշում է. «Որտեղ ակտիվ ծրագրեր են իրականացվել, այնտեղ և՛ բնակիչներն են ավելի տեղեկացված ու ակտիվ, և՛ կարծրատիպերն են կոտրվել: Եթե որոշ համայնքներում տան մեծերը դեռ ասում են՝ վայ, պետք չէ, որ մեր հարսը, մեր աղջիկը գնա, մասնակցի այդ ծրագրերին, այստեղ հակառակն է՝ հասկանում են, որ իրենց հարսն ու աղջիկը մի բան ավել կսովորեն»:

Գյուղի կանանց հետ համատեղ ծրագրեր իրականացնելու գաղափարն Ալվարդին ստիպել է դիմել տարբեր կազմակերպությունների՝ դրամաշնորհ ստանալու ակնկալիքով, դրան զուգահեռ, իր փոքրիկ ջերմոցում շարունակել է աճեցնել բրոկոլի, սպիտակ սմբուկ, բրուսելյան կաղամբ… Հինգ տարի շարունակ, սակայն, որևէ դրամաշնորհ ստանալու նրա փորձերն ապարդյուն են անցել: «Շատերի մոտ արդեն մտավախություն կար, ինձ ասում էին՝ մի դիմի, մեկ է, ոչ մի բան չի ստացվի, ում ուզեն՝ նրան են տալու»,- հիշում է Ալվարդը:

Բնավորությամբ համառ կնոջը, սակայն, հիասթափությունները ոչ թե ընկճել, այլ նոր ուժով են առաջ մղել:

Ջերմոցային տնտեսություններում ոչ ավանդական մշակաբույսերի աճեցման ծրագիրը հավանության է արժանացել ու դրամաշնորհ ստացել Եվրոպական Միության և Ավստրիայի զարգացման գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող ENPARD ծրագրի շրջանակներում: Ծրագրի նախապայմաններից մեկն էլ՝ կանանց միավորման ու որոշակի ֆինանսական ներդրման արդյունքում կոոպարետիվների ստեղծումն էր: 2015 թ.-ին Ալվարդն իր շուրջ համախմբված 4 կանանցով ստեղծում է «Առողջ սնունդ» կոոպերատիվն ու անցնում ծրագրով նախատեսված բրոկոլի մշակաբույսի մեծածավալ աճեցմանը:

Ծրագրի շրջանակներում խմբին տրամադրվում է 140 մ² տարածքով ջերմոց՝ կաթիլային ոռոգման համակարգով, անհրաժեշտ քանակով բրոկկոլիի սերմեր: Կանայք անցնում են գործի: «Ջերմոցում թաղարներով սածիլներն էինք դնում, որից հետո արդեն 35 օրական սածիլները տեղափոխում էինք դաշտ: Ասում ենք՝ կանանցով, բայց ընտանիքների անդամներն էլ են ընդգրկվում, այնպես չի, որ տղամարդկանց թողնում ենք անգործ մնան»,- կատակում է Ալվարդը:

Եռամյա ծրագրի առաջին փուլը կանանց համար եղել է խնդիրների բացահայտման տարի: «Չնայած եղանակը որոշակիորեն բարենպաստ էր, բայց դրա հետ մեկտեղ, եթե նաև ջրելու հնարավորություն ունենայինք, լավ կլիներ. բավականին վնաս տվեցին կրծողները. դրանց գործոնը հաշվի չէինք առել: Նաև հակակարկտային կայաններ ունենալու խնդիրը կա, որպեսզի կարողանանք պահպանել մեր բերքը: Ծրագիրը նման տարր ուներ նախատեսված միայն ջերմոցի համար»,- նշում է Ալվարդը: Առաջացած խնդիրներից կանայք հետևություններ են արել. այս տարի պետք է փորձեն հաշվարկել բոլոր հնարավոր ռիսկերը: Դրան զուգահեռ կշարունակեն փորձարկել նոր մշակաբույսեր: «Պատիսոն, գանգուր կամ սև կաղամբ, արտիշոկ էլ ենք աճեցնելու: Այս տարի ուզում եմ նաև կարմիր վարունգի մշակությամբ զբաղվել»,- նշում է գյուղատնտեսը: Նրա խոսքով՝ նախորդ տարի անցկացված ցուցահանդեսների ժամանակ սև կաղամբը «բուռն ընդունելության» է արժանացել: «Ամուսինս միշտ հումորով ասում է՝ մի քանի քոլ էր տարել, ահագին լավ վաճառվեց: Մարդիկ, ովքեր դրսում համտեսել էին սև կաղամբ, անմիջապես նկատում էին այն ու գնում, միաժամանակ պատմելով դրա օգտակար հատկությունների ու արտերկրում մեծ տարածում ունենալու մասին»,- նշում է նա: Ցուցահանդեսների արդյունքում, արդեն իսկ ավելացել են պատվերները: Ալվարդը վստահ է՝ ապագան առողջ սննդին է:

***Գայանե Սարգսյան***
***www.womennet.am***

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ՀԱՅ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ԵՆ ԱՐՏԵՐԿՐԻ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁԸ

***«Հայաստանի մանր կենդանիների անասնաբույժների ասոցիացիա» հասարակական կազմակերպությանն անդամակցում են 44 պրակտիկ անասնաբույժներ, այդ թվում՝ նաև ՀԱԱՀ դասախոսներ և ուսանողներ (սկզբում անդամների թիվը եղել է 25): Վահան Խաչատրյանի կարծիքով՝ անդամակցողների թիվն ավելանում է, քանի որ մասնագետներն ունեն առանձնակի հետաքրքրություններ՝ ոլորտում առկա նորարարություններին իրազեկվելու, մասնագիտական գիտելիքները հարստացնելու առումով:***

*-Պրն խաչատրյան, ինչ քայլեր են ձեռնարկվում, որպեսզի ասոցիացիային անդամակցողները ժամանակին իրազեկվեն ոլորտում առկա միջազգային նորարարություններին ու նորույթներին, և ինչ է արվում՝ դրանք Հայաստանում կիրառելու և ներդնելու առումով:*

-Ասոցիացիան արդեն 2-րդ անգամ անց է կացնում սեմինարներ, որոնց ընթացքում ներկայացվում են, թե ինչ նորույթներ կան ոլորտում: Մասնակիցները շների և կատուների բուժման, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման գործընթացում մասնագիտացած անասնաբույժներ են: Սեմինարներին մեծ հետաքրքրությամբ մասնակցեցին նաև ՀԱԱՀ ուսանողներ և մագիստրանտներ: Ի դեպ, մեր ասոցիացիան ներգրավվել է եվրոպական ասոցիացիաների ֆեդերացիայում: Սեմինարների թեմաներից մեկը վերաբերում էր կենդանիների կոտրվածքների դեպքում կատարվող վիրահատություններին, ինչպես նաև տարբեր ախտանշանների դեպքում անասնաբույժի կողմից ցուցաբերվող միջամտություններին: Սեմինարների ընթացքում մի շարք ընկերություններ ներկայացրել են իրենց կողմից թողարկվող դեղորայքները, ինչպես նաև կենդանիների կերակրման համար նախատեսված հատուկ կերերը, որոնք ներկրվում են Հայաստան: Դրանք նախատեսված են կենդանիների մոտ առկա այս կամ այն հիվանդության պարագայում օգտագործման նպատակով: Այդպիսի հիվանդություններից են կենդանիների շաքարախտը, սրտային անբավարարվածությունը, լյարդի, վերջույթների հետ կապված խնդիրները, որոնց համար առկա են հատուկ դիետաներ: Թեմաներից մեկն էլ վերաբերում էր կենդանիների մաշկային հիվանդություններին:

*-Իսկ ինչպե՞ս են հայ մասնագետները ձեռք բերում պրակտիկ փորձ:*

-Այդ նպատակով մեր մասնագետները մասնակցում են արտերկրում կայացող գիտաժողովներին: Երկու անասնաբույժ հրավերով մեկնել են Լեհաստան՝ որտեղ տեսել են տարբեր վիրահատություններ, ինչպիսիք են, օրինակ՝ ստամոքսի ոլորման կարգավորումը, այդ նպատակով մշակվել է նոր եղանակ: Մասնագետներն իրենց ուսումնասիրություններն ամփոփել են գրքույկի մեջ և բաժանել այդ խնդրի վերաբերյալ առանձնակի հետաքրքրություն ցուցաբերող տեղացի մասնագետներին: Եվս 2 անասնաբույժ մասնակցել են Անգլիայի անասնաբույժների գիտաժողովին, որի ընթացքում նույնպես ծանոթացել են ոլորտում առկա նորույթներին: Կարծում եմ, ցանկացած մասնագետի համար եվրոպական երկրների նորույթներն իմանալն ու նոր գիտելիքների ձեռքբերումը մեծ առավելություն է: Որպես ասոցիացիայի նախագահ՝ ես նույնպես հրավեր եմ ստացել ՌԴ-ի ասոցիացիայից: Ինձ հետաքրքրում է, թե ինչպիսի՞ կառուցվածք ունի նրանց ասոցիացիան, ինչպե՞ս է իրականացվում ասոցիացիայի անդամների մշտական կապը նախագահության հետ, որտեղի՞ց են հայթայթվում անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ միջազգային գիտաժողովների անցկացման նպատակով: Այնտեղ ստացա այս և նման հարցերի լիարժեք պատասխանները: Ի դեպ, ՌԴ-ում ասոցիացիային անդամակցողների թիվը գերազանցում է 3000-ը: Առաջարկ եղավ, որ մեր կազմակերպությունը ՌԴ-ի հետ համատեղ անցկացնի սեմինար:

*-Իսկ ինչ ծրագրեր ունեք ընթացիկ տարում:*

-Այս տարի լրանում է ՌԴ ասոցիացիայի 25 ամյակը, և հրավիրված ենք մասնակցելու հոբելյանական տոնակատարությանը: Նախատեսում ենք կազմակերպել տեղեկատվական սեմինար՝ կենդանիների վերակենդանացման և ցավազրկման թեմաներով: Սեմինարին հրավիրելու համար կապեր ենք հաստատել նաև մերձբալթյան երկրների մասնագետների հետ: Այն կազմակերպել ենք Հայաստանի նմանատիպ ասոցիացիաների հետ համատեղ: Մեր անասնաբույժները մասնակցում են նաև օնլայն սեմինարների՝ այդպիսով հարստացնելով իրենց գիտելիքները՝ գործնականում կիրառելու նպատակով:

***Հարցազրույցը՝ Նելլի Սահակյանի***

ԱԳՐՈ Լրատու
Ապրիլ 5 - 15, 2017 թ.
Թիվ 8 (2129)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

# ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՍԿՍՆԱԿ ՃԱԳԱՐԱՊԱՀՆԵՐԻՆ

***Ճագարաբուծությունը ժամանակակից մեթոդներով վարելու համար սկսնակ ճագարապահներին անհրաժեշտ են գիտելիքներ՝ այդ կենդանիների՝ կենսաբանական առանձնահատկությունների կերակրման, խնամքի, պահվածքի, բուժման եղանակի, ստացվող մթերքների մշակման, պահպանման, հիվանդությունների, դրանց կանխարգելման ու բուժման վերաբերյալ:***

Սկսնակներին խորհուրդ է տրվում ամենից առաջ ուսումնասիրել մասնագիտական գրականություն, փորձի փոխանակման կարգով այցելել քիչ թե շատ կայացած ճագարաբուծարաններ, ինչպես նաև խորհրդակցել փորձված ճագարաբույծների հետ:

Չափազանց կարևոր է մայր ճագարները ձեռք բերել մասնագետի ցուցումով, հիվանդություններից ապահով տնտեսություններից, ցանկալի է գնել 2-3 ամսական մատղաշ, որքան հնարավոր է խուսափելով շուկայից: Վերջին հանգամանքը շատ կարևոր է, քանի որ անհրաժեշտ է իմանալ, թե ձեռք բերված կենդանիներն ինչպիսի պայմաններում են խնամվել, ինչպես են կերակրվել, որպեսզի հնարավոր լինի խուսափել կերաբաժնի և կերակրման ռեժիմի, ինչպես նաև պահվածքի պայմանների կտրուկ փոփոխություններից: Երբեք չի կարելի գնել թույլ, թերսնված կենդանիներ: Երկարատև թերսնված, խոնավությամբ, ամոնիակով և ածխաթթվով հագեցած անասնաշենքում պահված ճագարներն առողջ լինել չեն կարող: Թաց դնչիկով /նույնիսկ՝ խոնավ/, ականջների խոռոչներում վերքերով, պոչատակը աղտոտված, հետին վերջավորությունների մակերեսը վերքոտված, մորթամազը գզգզված ճագարներից անհրաժեշտ է կտրուկ հրաժարվել: Ճագարներին զննելիս, հարկավոր է ձախ ձեռքով ամուր սեղմել մորթամաշկը և պահել օդում կախված վիճակով: Առողջ ճագարն այդ վիճակում <ամուր զսպանակի> տպավորություն է թողնում: Վատառողջ և թույլ կենդանին ակտիվություն չի դրսևորում և թույլ կախվում է ձեռքից: Ուշադրություն պետք է դարձնել ճագարների արտաքին սեռական օրգանների կառուցվածքին: Նկատելի ձևափոխությունները, ցաները և այլ շեղումները նորմայից անթույլատրելի են: Առջևի վերջավորությունների /թաթիկների/ ներքին մազածածկի կպչոտության առկայությունը հուշում է նաև, որ կենդանին ախտահարված է վարակիչ հարբուխով: Առողջ ճագարի աչքերը պետք է լինեն պարզ, կոպերը չայտուցված, մազածածկը հարթ ու փայլուն:

*Արծաթափայլ ցեղի ճագարներ*

*Կալիֆոռնիական ցեղ*


*Հայկական մարդեր ցեղ*

Սկսնակ ճագարապահը պետք է իմանա, որ ճագարը շատ զգայուն կենդանի է և ունի փխրուն նյարդային համակարգ: Անսովոր աղմուկը, նույնիսկ ծանոթ առարկաների անակնկալ հայտնվելը կարող են պատճառ դառնալ վիժումների, ձագակերության, կտղուցքի ընդհատման: Մոր հիվանդ վիճակը ձագերի մոտ կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների: Հղի ճագարամայրերը ծայրահեղ վախկոտ և դյուրագրգիռ են, հատկապես՝ ծնի նախօրեին և դրանից հետո: Այսպիսով պետք է հիշել, որ ճագարանոցում ստեղծված «հանգիստ միկրոկլիման» հուսալի գրավական է հոտի հաջող վերարտադրության համար: Ճագարանոցում սպասարկման բոլոր աշխատանքները հարկավոր է կատարել հանգիստ՝ բացառելով շտապողականությունը և, հնարավորության սահմաններում՝ առանց կողմնակի անձանց:

Մեր հանրապետության գյուղացիական տնտեսություններում ճագարաբուծությունը մեծ մասամբ ցածր հիմքերի վրա է դրված: Նույն առանձնաշենքում գյուղատնտեսական տարբեր կենդանիների հետ միասին, պահվում են նաև ճագարներ, որը կտրականապես արգելվում է: Հիմնականում սրանով է պայմանավորված ցյուղի անարդյունավետությունը և անմխիթար վիճակը: Մինչդեռ, անհատական ագարակային տնտեսությունում խելացիորեն կազմակերպված է ընդամենը 3-4 ճագարամայրերից բաղկացած մինիֆերմանկանոնավոր կերակրման, ճիշտ խնամքի, պահվածքի և բուծման պայմաններում կարող է բավարար կերպով ապահովել ընտանիքում օգտագործվելիք մսի տարեկան պահանջը: Չորս մայր ճագարից տարեկան կարելի է ստանալ առնվազն 100 ձագ, իսկ դրանց խնամելու և կերակրելու համար շատ քիչ աշխատանք է պահանջվում, որը կարող են կատարել նույնիսկ դպրոցականները, պատանիները, ընտանիքի տարեց անդամները:

### ՃԱԳԱՐԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընտանի ճագարն աչքի է ընկնում մթերատվության արդյունավետությունը պայմանավորող մի շարք օգտակար կենսաբանական առանձնահատկություններով: Այսպես՝ կարճատև հղիություն, վաղ սեռահասունություն, պտղառատություն, վաղահասունություն, ինչպես նաև հղիությունը և լակտացիան համատեղելու բացառիկ ունակություններով: Հետազոտություններով պարզվել է, որ չբեղմնավորված ճագարամայրի մոտ սեռական ցանկությունը (կտղուցք) տևում է 3-5 օր, այն պարբերաբար կրկնվում է տարվա ընթացքում. տաք շրջաններում՝ 5-7, իսկ ցուրտ շրջաններում՝ 8-9 օր հետո:

Ի տարբերություն գյուղատնտեսական մյուս ընտանի կենդանիների՝ ճագարի մոտ ձվազատումը (օվուլյացիա) տեղի է ունենում միայն բնական սեռական գործողությունից (ակտից) հետո: Սեռական ակտից գրգռված հիպոֆիզը սկսում է արյան մեջ ներարկել գոնոդոտրոպ (սեռահակ) հորմոններ, որոնք խթանում են ֆոլիկուլների գարգացմանը: Ֆոլիկուլների պատերը, ակտից 10-12 ժամ հետո պատռվում են և 3-19 հասուն ձվաբջիջները թափանցում են ձվափողերի լուսանցքները, որտեղ և տեղի է ունենում բեղմնավորում: Պատռված ֆոլիկուլի տեղում ձևավորվում է դեղին մարմինը: Վերջինս հանդես է գալիս որպես ներքին սեկրեցիայի գեղձ՝ արյան մեջ արտադրելով պրոգեստերոն հորմոնը, որը նպաստում է արգանդի և կաթնագեղձերի գարգացմանը: Բեղմնավորումից 10-12 ժամ հետո ձևավորված զիգոտաները սկսում են տրոհվել: Էմբրիոնները գարգանում են շատ ինտենսիվ: Չկպչելով արգանդի պատերին՝ սաղմերը գարգանում են մինչև 8 օրական հասակը: Երկու շաբաթ անց նրանք հասնում են սովորական պնդուկի չափերի, և որովայնի աճուկային հատվածը գգուշությամբ շոշափելիս հեշտությամբ հայտնաբերվում են: Հաճախ ճագարբույծները հղիությունը վաղ բացահայտելու համար օգտվում են հենց այս մեթոդից: Ծնուղիների նախապատրաստմանը զուգընթաց՝ ավարտվում է նաև պտղի սաղմնային գարգացումը, որը տևում է 28-33 օր: Հղիության շրջանը տևում է միջին հաշվով 30 օր:

Ծինը, սովորաբար, տեղի է ունենում գիշերային ժամերին: Այն ընթանում է հանգիստ և տևում է 10-60 րոպե: Ճագարամայրը կարող է պտղաբերել 1-24, սակայն հաճախ 6-12 ճագարիկներ: Մի շարք ցեղերի մոտ միջին պտղատվությունը կազմում է 7-8 ձագ:

Ճագարամայրը ակտիվ կտղուցքի մեջ է լինում հատկապես ծնից 1-2 օր հետո և ֆիզիոլոգիապես պատրաստ է բեղմնավորվել: Հաճախ ճագարաբույծները օգտվելով ճագարի այս ինքնատիպ առանձնահատկությունից՝ արտադրությունում փորձում են կազմակերպել և ստանալ խտացրած ծին: Այսինքն՝ ճագարամայրը կարող է նոր հղիությունը համատեղել ընթացիկ լակտացիայի (կաթնատվության) հետ: Խտացրած ծին կազմակերպելիս, հարկավոր է հիշել, որ ճագարամայրը պետք է կերակրվի բարձրարժեք, սննդարար կերերով և ունենա պահվածքի ու խնամքի բարենպաստ պայմաններ: Հակառակ դեպքում, մայրի ինտենսիվ օգտագործումը բացասաբար կանդրադառնա նրա առողջական կիճակի և վերարտադրական հատկությունների վրա, իսկ արդյունքում՝ մայրը շատ արագ տնտեսապես կդառնա ոչ պիտանի և անժամանակ կխոտանվի:

Բարենպաստ պայմաններում օգտվելով ճագարի կարճատև հղիությունից և ճիշտ կիրառելով խտացրած ծնի տեխնոլոգիան, փորձված ճագարաբույծները տարեկան կարող են ճագարամայրից ստանալ 10-11 ծին և միջին հաշվով՝ 60-70 ճագարիկ:

***Շարունակելի***

***Ռոբերտ Վարդանյան***
*Ավագ գիտաշխատող, սելեկցիոներ*

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

# ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

***Օրերս Նոյեմբերյանի տարածաշրջանի Հաղթանակ համայնքում, Ավստրիական զարգացման գործակալության կողմից իրականացվեց մեղվաբուծության զարգացմանն ուղղված գործնական դասընթաց, որը վարում էր գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարեն Ավետիսյանը: Դասընթացում ընդգրկված էին ծրագրի շահառուներ, մեղվաբուծությամբ զբաղվող ֆերմերներ և ԳԱՄԿ-ի աշխատակիցներ:***

Թեմաները վերաբերում էին մեղուների հետ աշխատելու հիմնական կանոններին, մեղրաբերքի բացակայության պայմաններում, մեղվաընտանիքների հետ աշխատելու առանձնահատկություններին, մեղվանոցում, գարնանային աշխատանքներին բուժկանխարգելիչ միջոցառումներին և կերակրումներին: Մեղվապահի ցանկությամբ անցկացվեց նաև ընտրված մեղվաընտանիքների գործնական զննում:

Ի դեպ, օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն (ՕԳԱՆ) ծրագրով՝ այս տարածաշրջանից շահել են երկու մեղվաբույծ՝ Գառնիկ Գուլքանյանը և Սեյրան Ալեքսանյանը:

Հանդիպումը կայացավ հենց Գառնիկ Գուլքանյանի մեղվաբուծական տնտեսությունում, որտեղ մասնակիցներն ստացան իրենց հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները:

***Տ. Նազինյան***
***Տավուշի ԳԱՄԿ***

## ԲՈՒՅՍԵՐԻ ԱՇԽԱՐՀ

# ՉԻՉԽԱՆԻ /ОБЛЕПИХА/ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Չիչխան կամ ծիափուշ. Hippophae հունարեն անվանումը բաղկացած է Hippos-ձի և Phase-շուք,փայլ բառերից: Հայկական փարանուններն են՝ ափռի, ծովափուշ, ծիափշատ, ծիափուշ, ծորի փուշ:***

Հայերեն և հունարեն անվանումները ցույց են տալիս, որ ձիերին կերակրել են ծիափշի պտուղներով ու տերևներով: Հոգնեցուցիչ արշավներից հյուծված կենդանիներն ուտելով այդ փշոտ բույսը՝ շատ արագ գիրանում էին, իսկ նրանց մազածածկույթը դառնում էր փայլուն ու խիտ: Չինաստանի բժիշկները չիչխանը համարում էին առողջության և երկարակեցության հատապտուղ և դրանով բուժում բազմաթիվ հիվանդություններ: Արևելյան և Հարավային Ռուսաստանում այն անվանում էին «սիբիրյան անանաս»: Առաջին ցրտահարություններից հետո հավաքված պտուղներն իսկապես իրենց հյութալիությամբ նման են էկզոտիկ անանասին: Չիչխանը տարածված է Արևելյան Ասիայից մինչև Արևմտյան Եվրոպա: Աճում է ծովափնյա շրջաններում՝ կազմելով խիտ մացառուտներ, համեմատաբար տաք կլիմայական գոտիներում: Հայաստանում մշակվում է հիմնականում Սևանա լճի առափնյա ավազուտներում, Աբովյանի, Իջևանի, Սևանի, Մեղրու, Գորիսի, Սիսիանի, Կիրովականի և այլ շրջաններում:

Չիչխանը 2-6 մ բարձրությամբ ծառանման թուփ է՝ փշատազգիների ընտանիքից: Ունի գծակերպ տերևներ և մանր հոտավետ դեղին ծաղիկներ: Հյութեղ, կլորավուն, շիկակարմիր կորիզապտուղները խիտ կպած են ճյուղերին: Ծաղկում են գարնան կեսերին, հասունանում աշնանը և պահպանվում ճյուղերին ողջ ձմռանը:

Պտուղը հավաքում են ճյուղերը թափահարելով կամ հատուկ ունելիով: Սառեցրած պտուղները պահպանվում են մինչև 6 ամիս, թարմը՝ մի քանի օր: Չիչխանի պտուղներից պատրաստում են հյութ, ջեմ, մուրաբա, կիսել, դոնդող, լիկյոր, մրգօղի: Բուժական նպատակներով օգտագործվում են ճյուղերի կեղևը, տերևները, պտուղները, սերմերը:

Չիչխանը օգտակար նյութերի գանձարան է, որը հարուստ է վիտամիններով: Պտղի մեջ հայտնաբերվել են միկրոտարրեր՝ երկաթ, բոր, տիտան, մանգան, ալյումին, մագնեզիում, կրեմնիում, որոնք շատ կարևոր են մարդու աճի և զարգացման համար:

Յուղի մեջ պարունակվում են օլեինի, լինոլենի, լինոլի, ճարպային թթուներ: Տերևները պարունակում են մեծ քանակությամբ ասկորբինաթթու:

Չիչխանն օգտակար է նյութափոխանակության կարգավորման և արյան շրջանառության համար: Բուժման նպատակով օգտագործվում են բույսի պտուղներն ու սերմերը, դրանցից ստացվող յուղը, որոշ դեպքերում նաև՝ տերևները: Պտուղները հավաքում են ձմռանը, երբ սառչում են ու ձեռք են բերում հաճելի թթվահամ: Պտուղներն իրենց համը և բուժական հատկանիշները պահպանում են նույնիսկ սառած վիճակում: Տերևները հավաքում են, չորացնում հով տեղում՝ միջանցիկ քամու տակ: Սակայն դեղաբույսը համընդհանուր ճանաչում է ձեռք բերել իր գորշ կարմրավուն, յուրահատուկ համով և հոտավետ յուղի շնորհիվ:

Չիչխանի պտուղները կանխարգելում են աթերոսկլերոզը, հիպերտոնիան, վաղաժամ ծերությունը, նպաստում սերոտոնինի ստեղծմանը, որը կարգավորում է նյարդային համակարգի աշխատանքը: Տարբեր ժողովուրդներ չիչխանի պտուղներն օգտագործել են որպես հակալնդախտային, ցավազրկող, մազերն ամրացնող, մաշկային որոշ հիվանդություններ ամոքող միջոց: Պտուղներից պատրաստված եփուկն օգտագործվել է աղեստամոքսային տրակտի հիվանդությունների ժամանակ: Սերմերից պատրաստված եփուկն օժտված է հիանալի թուլացնող հատկությամբ, մինչդեռ ճյուղերի և տերևների եփուկն ունի միանգամայն հակառակ ներգործություն և օգտագործվում է լուծի ժամանակ: Պտուղների և տերևների եփուկն օգտագործվում է ինչպես ներքին ընդունման, այնպես էլ գլուխը լվանալու ձևով՝ մազաթափության և ճաղատության, ինչպես նաև ռևմատիզմի և հոդատապի ժամանակ: Դեղաբույսից ստացված յուղը լայն կիրառություն ունի կլինիկական բժշկության մեջ: Ըստ Լ. Ն. Յուդկինայի (ցիտ. Ա. Դ. Տուրովայի)՝ չիչխանի յուղը լավ արդյունք է տալիս մաշկի թարախային բորբոքումների ժամանակ: Յուղն ընդհանրապես խթանում է բոլոր տեսակի վերքերի գրանուլացիան և վերացնում ցավը, արագացնում բուժման պրոցեսը: Յուղը լայնորեն օգտագործվում է գինեկոլոգիայում:

Չիչխանի պտուղները խորհուրդ են տալիս օգտագործել հատկապես քիմիաթերապիայից և ռադիոթերապիայից հետո, ինչպես նաև՝ հակաբիոտիկներ օգտագործելուց հետո: Չիչխանի պտուղները շատ օգտակար են դիաբետիկների, տարիքով մարդկանց և պրոֆեսիոնալ սպորտսմենների համար: Չափազանց օգտակար է հոգնած սրտի աշխատանքի համար: Այս բույսի պտուղները կանխարգելիչ միջոց են ինսուլտի և ինֆարկտի խնդիրներից խուսափելու համար: Օգնում են վերականգնել օրգանիզմի ռեսուրսները՝ տարբեր հիվանդություններից հետո, միաժամանակ հոգեկան և ֆիզիկական ծանրաբեռնվածությունն է թեթևացնում:

Շնչառական համակարգի համար չիչխանը նույնպես օգտակար է. սուր և քրոնիկ լարինգիտի և ֆարինգիտի ժամանակ խորհուրդ է տրվում լորձաթաղանթները չիչխանի յուղով մշակել և ինհալացիաներ անել: Կա կարծիք, որ այդ ինհալացիաները օգնում են նաև ձմռանը՝ կանխարգելելով շնչառական օրգանների վարակները:

***Լիլիթ Գասպարյան***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու համար*

**Գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակի բաձրացման նպատակով, նախատեսվում է հավաքագրել գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման վերաբերյալ առաջարկներ: Գյուղատնտեսական տեխնիկայի կայանների գործունեության կազմակերպման և զարգացման նպատակով, պետության կողմից նախատեսվում է տրամադրել մինչև 700 մլն ՀՀ դրամ:**

*Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման վերաբերյալ յուրաքանչյուր անձ կարող է ներկայացնել առաջարկ (այսուհետ՝ Առաջարկ): Առաջարկը պետք է պարունակի տեղեկատվություն՝ առնվազն հետևյալ չափանիշների (այսուհետ՝ Առաջարկի չափանիշներ) վերաբերյալ.*

- իրականացման վայրը, վայրի ընտրության հիմնավորումը և չափանիշները: Գյուղատնտեսական տեխնիկան պետք է շահագործվի առնվազն 2000 հա հողատարածքի մշակության համար,
- տնտեսական հիմնավորումը, ֆինանսական հաշվարկները, սեփական և փոխառու ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ հաշվարկ-հիմնավորումները,
- մասնավոր հատվածի կողմից ներդրվող միջոցների չափը, կազմը և ծագման աղբյուրը,
- տնտեսական արդյունավետությունը և ֆինանսական 5 տարվա կտրվածքով կանխատեսումը,
- գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կողմից մատուցման ենթակա ծառայությունների տեսակները, ինքնարժեքի հաշվարկ-հիմնավորումը, դրանց գների համադրությունը և մրցունակությունը շուկայում՝ ներկայումս առկա նմանատիպ ծառայությունների հետ,
- Առաջարկի իրականացման հետ կապված՝ տվյալ տարածքում ստեղծվող ենթակառույցների, մշակվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների և դրանց բերքատվության աճի վերաբերյալ կանխատեսումը՝ արդյունքների չափելի ցուցանիշների նշմամբ,
- անհրաժեշտ պետական ֆինանսավորման չափը և ներգրավման պայմանները, ներդրված պետական միջոցների հետվերադարձի ժամկետը, ներդրված միջոցների շահութաբերության մակարդակը և ներդրումների վերադարձելիության ռիսկի գնահատականը, անհրաժեշտ տեխնիկայի ցանկը և կանխատեսվող գները ՀՀ դրամով, գները հիմնավորող փաստաթղթերը՝ հաշվի առնելով Առաջարկի ներկայացման օրվա դրությամբ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանած փոխարժեքը:

*Առաջարկների ընտրությունն իրականացվելու է՝ ըստ Առաջարկի չափանիշների և նախապատվությունը տրվելու է այն Առաջարկներին, որոնք ապահովելու են.*

- ներդրված պետական միջոցների ավելի կարճ ժամկետում հետվերադարձ և ներդրումների վերադարձելիության նվազ ռիսկ,
- մասնավորի կողմից սեփական միջոցների առավելագույն ներդրում,
- Առաջարկի առավել մեծ տարածքում իրականացում,
- գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կողմից մատուցման ենթակա ծառայությունների նվազագույն գին,
- Առաջարկի իրականացման տնտեսական առավել բարձր արդյունավետություն:

**Գործընթացին մասնակցելու ցանկության դեպքում անհրաժեշտ է մինչև 2017 թ. ապրիլի 27-ը, ժամը՝ 18:00–ը ՀՀ ԳՆ ներկայացնել Առաջարկ (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, կամ էլեկտրոնային փոստի՝ agro@minagro.am հասցեով):**

**ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին**

***Հարգելի քաղաքացիներ,***

**Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:**

**Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:**

***ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 2017 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ***

**«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթ**
1 համարի գինը՝ 120 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ

**«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր**
1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 8100 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝

- Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները
- «Հայփոստ»,
- «Հայմամուլ»,
- «Պրեսս-Աստաշե»

կազմակերպությունները

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Սամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 28
ստորագրված է տպագրության 14.04.2017 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Սամիկոնյանց 39ա